



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան
անդրադառնալ ավելի ուշ:

*Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության
համար:*

1

Ստորև նշված որ համակարգն է ամպային օպերացիոն հարթակ՝ նախատեսված ինտերնետում ծրագրերի և ծառայությունների տեղակայման ու կառավարման համար:

- 1) Windows 11
- 2) Linux
- 3) Azure
- 4) Windows Server

2

Ի՞նչ ընդհանրություն կա .docx և .xlsx ֆայլերի կառուցվածքի մեջ:

- 1) Երկու ձևաչափերն էլ ZIP-արխիվներ են, որոնք պարունակում են XML ֆայլեր՝ տվյալների և փաստաթղթի կառուցվածքի պահպանման համար
- 2) Երկու ձևաչափերն էլ սովորական տեքստային ֆայլեր են
- 3) Երկու ձևաչափերն էլ պահում են տվյալները միայն երկուական կոդով՝ առանց տեքստային նկարագրության
- 4) Երկու ձևաչափերն էլ անհամատեղելի են ամպային ծառայությունների հետ

3

Ո՞ր պնդումն է ճիշտ նկարագրում Microsoft Office-ի Clipboard-ի հնարավորությունները:

- 1) Clipboard-ը միջոցով հնարավոր չէ պատճենել աղյուսակները Excel-ից դեպի Word
- 2) Clipboard-ը չի պահում պատկերներ, միայն տեքստ
- 3) Clipboard-ը ինքնաբերաբար ջնջում է օբյեկտները յուրաքանչյուր 5 րոպեն մեկ
- 4) Clipboard-ը կարող է միաժամանակ պահել մինչև 24 օբյեկտ

4

Ի՞նչ հնարավորություն է տալիս Microsoft Office-ի արագ հասանելիության գործիքագոտու (Quick Access Toolbar) և ժապավենի (Ribbon) կարգավորումը:

- 1) Փոխել Office-ի ինտերֆեյսի լեզուն
- 2) Ավելացնել, հեռացնել և վերադասավորել հրամանները՝ օգտվողի հարմարավետ աշխատանքի համար
- 3) Փոխել Word և Excel ֆայլերի ձևաչափը
- 4) Կառավարել օգտվողների մուտքը փաստաթղթերին

5

Ի՞նչ է կատարում Transcribe գործիքը Microsoft Word-ում (Office 365-ում):

- 1) Ավտոմատ ուղղում է տեքստային սխալները
- 2) Ստեղծում է փաստաթղթի ձևանմուշ
- 3) Ձայնային ֆայլերը վերածում է տեքստի
- 4) Թարգմանում է տեքստը մեկ լեզվից մյուսը

6

Ի՞նչ պետք է անել, որպեսզի Microsoft Word կամ Excel ծրագրերում ավելացվի նոր ֆոնտ և այն հայտնվի ֆոնտերի ցուցակում:

- 1) Ֆոնտը պետք է ներմուծել անհրաժեշտ փաստաթղթի մեջ
- 2) Ֆոնտը պետք է ավելացնել Clipboard-ի միջոցով
- 3) Ֆոնտը պետք է ներբեռնել և տեղադրել օպերացիոն համակարգի Fonts թղթապանակում
- 4) Ֆոնտերի ցուցակում նոր ֆոնտ ավելացնելու համար պետք է կիրառել MS Office տեղադրման փաթեթը

7

Երբ տվյալները փոփոխվում են սկզբնական աղյուսակում (source data), ի՞նչ քայլ է անհրաժեշտ կատարել Pivot Table-ում, որպեսզի ցուցադրվեն թարմացված արդյունքները:

- 1) Փոփոխությունները ինքնաբերաբար արտացոլվում են Pivot Table-ում առանց որևէ գործողության
- 2) Պետք է ընտրել Pivot Table-ը և կատարել Refresh հրամանը
- 3) Պետք է կրկին ստեղծել Pivot Table-ը զրոյից
- 4) Պետք է ֆիլտրերը անջատել և նորից միացնել

8

Ի՞նչն է ամենաճշգրիտ կերպով բնորոշում թոքենիզատորի (tokenizer) դերը LLM (Large Language Model) համակարգերում:

- 1) Թոքենիզատորը որոշում է նեյրոնային ցանցի կառուցվածքը և շերտերի քանակը:
- 2) Թոքենիզատորը փոխակերպում է տեքստը թվային ներկայացումների, որոնք հասկանալի են մոդելին:
- 3) Թոքենիզատորը պատասխանատու է մոդելի քաշերի վերականգման և կարգաբերման համար:
- 4) Թոքենիզատորը կառավարում է տեքստի գեներացումը և "temperature" պարամետրը:

1.

```
import openai
response = openai.ChatCompletion.create(
    model="gpt-6",
    input="Hello!")
print(response.text)
```

2.

```
from openai import OpenAI
client = OpenAI()
response = client.chat.completions.create(
    model="gpt-4o",
    messages=[{"role": "user", "content": "Hello!"}])
print(response.choices[0].message["content"])
```

3.

```
import openai
response = openai.Model.generate(
    name="gpt-4",
    prompt="Hello!")
print(response.output)
```

4.

```
from openai import GPT
client=chat
model=noName
GPT.run("Hello!")
print(response.output)
```

10

Ի՞նչ արժեք կարտածի հետևյալ Python կոդը.

```
a = 40
b = 2
result = a >> b
print(result)
```

- 1) 10
- 2) 20
- 3) 30
- 4) 40

11

Ի՞նչ հիմնական նպատակ ունի LOOKUP ֆունկցիան Excel-ում:

- 1) Տեքստերի համատեղում և միացում
- 2) Աղյուսակում որոշակի արժեքի որոնում
- 3) Թվերի միջին արժեքի հաշվարկում
- 4) Աղյուսակի տողերի և սյուների փոխանակում

12

Ի՞նչ արժեք կստացվի հետևյալ բանաձևից՝

=COUNT(A1:A5), եթե բջիջների արժեքներն են՝
A1=12, A2="Hello", A3=7, A4=15, A5 դատարկ է

- 1) 5
- 2) 3
- 3) 4
- 4) 2

13

Եթե B1:B5 տիրույթում արժեքներն են՝

B1=10, B2 դատարկ է, B3 դատարկ է, B4=25, B5="Data"

Ի՞նչ արժեք կտա բանաձևը՝ =COUNTBLANK(B1:B5)

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

14

Նշվածներից ո՞ր տվյալների տիպն է չփոխվող (immutable) Python-ում:

- 1) List
- 2) Dictionary
- 3) Tuple
- 4) Set

15

Ի՞նչ կարտածի հետևյալ Python կոդը.

```
a = [1, 2, 3]
b = [1, 2, 3]
print(a == b)
print(a is b)
```

- 1) True
True
- 2) True
False
- 3) False
True
- 4) False
False

16

Ի՞նչ կարտածի հետևյալ Python կոդը.

```
x = "data"
y = "data"
z = ["data"]
print(x == y)
print(x is z)
```

- 1) True
False
- 2) True
True
- 3) False
True
- 4) False
False

17

Ի՞նչ կարտաձի հետևյալ Python կոդը.

```
x = "data"
y = "data"
z = ("data")
print(x == y)
print(x == z)
```

- 1) True
True
- 2) True
False
- 3) False
True
- 4) False
False

18

Ի՞նչ կարտաձի հետևյալ Python կոդը.

```
*a, b, c = 10, 20, 30, 40, 50
print(a)
```

- 1) [10, 20, 30]
- 2) [30, 40]
- 3) 10
- 4) [20, 30, 40, 50]

19

Ի՞նչ կարտաձի հետևյալ Python կոդը.

```
t1 = (5, 10, 15)
t2 = (5, 8, 20)
print(t1 > t2)
```

- 1) True
- 2) False
- 3) TypeError
- 4) FatalError

20

Ի՞նչ կարտածի հետևյալ Python կոդը (␣ նշանակում է բացատ).

```
def calc(x):  
    x = x + 5  
    ␣ y = x * 2  
    ␣ return y  
print(calc(3))
```

- 1) SyntaxError
- 2) IndentationError
- 3) NameError
- 4) FatalError

21

Python-ի tuple-ների վերաբերյալ տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. Tuple-ը **չի կարող** պարունակել գրաֆիկական օբյեկտներ:
2. Tuple-ը կարող է ներառել թվեր, տողեր, ցուցակներ և Python-ի օբյեկտ չհանդիսացող տեղեկատվություն
3. Tuple-ը չի աջակցում slicing գործողություններին
4. Tuple-ները չեն կարող փոփոխվել (immutable) են
5. Tuple-ի տարրերը կարելի է հասանելի դարձնել ինդեքսի միջոցով
6. Tuple-ի տարրերը ավտոմատ դասավորվում են աճման կարգով
7. Tuple-ը կարելի է փոխարկել List-ի՝ list() ֆունկցիայի միջոցով
8. Tuple-ը կարելի է ընդլայնել append() մեթոդով
9. Tuple-ը չի կարող ստեղծվել դատարկ ձևով

Python-ի Encapsulation թեմայի վերաբերյալ տրված պնդումներից 3-ը ճիշտ են:
Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Encapsulation-ի նպատակն է թույլ տալ ազատ մուտք օբյեկտի բոլոր ատրիբուտներին
2. Python-ում մասնավոր (private) ատրիբուտները սովորաբար սկսվում են երկու ստորագծով` __
3. Encapsulation-ը կիրառվում է նոր կլաս ստեղծելու համար
4. Encapsulation-ը կարելի է կիրառել միայն ֆունկցիաների համար
5. Encapsulation-ը հակասում է ժառանգման գաղափարին
6. Encapsulation-ը նշանակում է տվյալների ամբողջական բացահայտում ծրագրի բոլոր մասերից
7. Encapsulation-ը տվյալների և մեթոդների միավորում է մեկ կլասի մեջ
8. Encapsulation-ը պաշտպանում է օբյեկտի ներքին տվյալները արտաքին փոփոխություններից
9. Encapsulation-ը` ազատ մուտք ապահովելով օբյեկտին, որոշ չափով նվազեցնում է ծրագրի անվտանգության մակարդակը

Python-ի Set-ի վերաբերյալ տրված պնդումներից 3-ը ճիշտ են:
Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Set-ը չի կարող պարունակել անփոփոխ (immutable) տարրեր
2. Set-ի տարրերի հերթականությունը չի պահպանվում (unordered)
3. Set-ի տարրերին կարելի է հասնել ըստ ինդեքսի
4. Set-ը պահպանում է միայն եզակի (unique) տարրեր
5. Set-ը կարելի է ստեղծել փակագծերով` ()
6. Set-ը կարելի է միավորել մեկ այլ set-ի հետ union() կամ | օպերատորով
7. Set-ի տարրերը միշտ դասավորվում են աճման կարգով
8. Set-ը չի աջակցում տարբերություն (difference) գործողությանը
9. Set-ի մեջ կարելի է ավելացնել list կամ dictionary որպես տարր

Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Տողում հնարավոր չէ փնտրել ենթատող in օպերատորով
2. Տողերը անփոփոխ (immutable) օբյեկտներ են
3. Տողերը չեն աջակցում slicing գործողություններին
4. Տողերը չեն կարող պարունակել escape նիշեր (օր. \n, \t)
5. Տողի երկարությունը որոշվում է count() մեթոդով
6. Տողերը կարելի է բազմապատկել ("Hi" * 3 → "HiHiHi")
7. Տողերը հնարավոր է մասամբ փոփոխել՝ որոշ նիշ փոխելով
8. Տողերի համեմատությունը (>, <, ==) կատարվում է բառարանային (lexicographical) կարգով
9. Տողերը հնարավոր չէ միացնել + օպերատորով

ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Բոլոր ֆունկցիաները պետք է պարտադիր վերադարձնեն արժեք
2. Ֆունկցիաները չեն կարող ունենալ լռելյայն (default) արժեքներ
3. Ֆունկցիայի անունը չի կարող պարունակել թվեր
4. Ֆունկցիան կարող է կանչվել բազմիցս՝ տարբեր արգումենտներով
5. Ֆունկցիան հնարավոր չէ սահմանել առանց պարամետրերի
6. Ֆունկցիան պետք է միշտ գրվի մեկ տողում
7. Ֆունկցիաները սահմանվում են def բանալի բառով
8. Ֆունկցիան կարող է վերադարձնել արժեք return հրամանով
9. Ֆունկցիան չի կարող կանչել ինքն իրեն (recursion)

Python-ի ֆայլային գործողությունների (File Handling) վերաբերյալ տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Ֆայլ բացելիս 'w' ռեժիմը պահպանում է նախորդ տվյալները
2. with open() կառուցվածքը չի կիրառվում գրելու ռեժիմում ֆայլ բացելու համար
3. Ֆայլ բացելու համար օգտագործվում է open() ֆունկցիան
4. Ֆայլը հնարավոր չէ բացել գրելու և կարդալու ռեժիմում միաժամանակ
5. Ֆայլը կարող է բացվել տարբեր ռեժիմներով՝ 'r', 'w', 'a', 'r+'
6. Ֆայլը փակելու անհրաժեշտություն չկա՝ Python-ը դա անում է ավտոմատ
7. Ֆայլի պարունակությունը կարելի է կարդալ read() մեթոդով
8. Տեքստային ֆայլերում հնարավոր չէ գրել թվեր
9. close() մեթոդը փակելուց հետո կարելի է կրկին գրել նույն ֆայլում առանց բացելու

Python-ի Modules և Packages թեմաների վերաբերյալ տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Փաթեթը (package) ֆայլերի ժողովածու է, որը պարտադիր պետք է պարունակի __init__.py ֆայլ
2. Մոդուլը չի կարող ներմուծվել մեկ այլ մոդուլում
3. Փաթեթները չեն կարող ունենալ ենթափաթեթներ
4. Մոդուլները չեն կարող պահվել առանձին ֆայլերում
5. Մոդուլը Python ֆայլ է, որը պարունակում է ֆունկցիաներ, դասեր կամ փոփոխականներ
6. Մոդուլ ներմուծելու համար օգտագործվում է import հրամանը
7. Ներմուծված մոդուլը պետք է օգտագործվի անմիջապես բացելուց հետո, հակառակ դեպքում ջնջվում է հիշողությունից
8. Նույն մոդուլը հնարավոր չէ ներմուծել մեկ ծրագրում մեկից ավել անգամ
9. Մոդուլների ֆայլերի ընդլայնումը միշտ պետք է լինի .pkg

Python-ի բացառությունների (Exceptions) վերաբերյալ տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Բացառությունները (exceptions) օգտագործվում են ծրագրի սխալները վերահսկելու և մշակելու համար
2. try բլոկում գրվում է այն կոդը, որը կարող է առաջացնել սխալ
3. finally բլոկը կատարվում է միայն այն դեպքում, երբ սխալ է առաջանում
4. Բացառությունների մշակումը դանդաղեցնում է ծրագրի աշխատանքը և չի կիրառվում պրոֆեսիոնալ կոդում
5. Մինչև try բլոկի համար չի կարելի ունենալ մի քանի except բլոկ
6. raise հրամանով հնարավոր չէ ստեղծել սեփական բացառություններ
7. except բլոկը կատարվում է միայն այն դեպքում, երբ սխալ է առաջանում
8. Բացառությունները հնարավոր չէ ժառանգել դասերից
9. Բացառությունների մշակման հիմնական նպատակը ծրագրի դադարեցումն է

Տրվածներից ո՞ր 3-ն են ճիշտ կերպով նկարագրում RAG (Retrieval-Augmented Generation) համակարգի աշխատանքի սկզբունքը և բաղադրիչները: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. RAG համակարգը համադրում է որոնման (retrieval) և գեներացիայի (generation) մեխանիզմները՝ ապահովելով պատասխանների առավել ճշգրիտ և փաստային բնույթ:
2. RAG մոդելը գործում է բացառապես առանց արտաքին տվյալների բազայի:
3. RAG-ի retrieval բաղադրիչը որոնում է համապատասխան փաստաթղթեր վեկտորային ինդեքսում (vector store):
4. Generation մոդուլը միշտ օգտագործում է fine-tuned GPT մոդել:
5. RAG համակարգերը չեն կարող օգտագործվել API միջավայրերում:
6. Վեկտորային ներկայացումները (embeddings) չեն օգտագործվում տեքստերի նմանությունը հաշվարկելու համար:
7. Retrieval բաղադրիչը պատասխան է գեներացնում՝ առանց Large Language Model-ի մասնակցության:
8. RAG համակարգերում տեքստային որոնումը կատարվում է միայն հիմնաբառերով՝ առանց embeddings-ի:
9. RAG-ը թույլ է տալիս օգտագործել սեփական գիտելիքների բազա՝ առանց մոդելի վերաուսուցման:

Python-ի Polymorphism թեմայի վերաբերյալ տրված պնդումներից 3-ը ճիշտ են:
Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Polymorphism-ը տարբեր կլասների օբյեկտներին թույլ է տալիս նույն մեթոդը օգտագործել տարբեր ձևերով
2. Polymorphism-ը նշանակում է, որ բոլոր կլասները պետք է ունենան իրենց մեթոդների անունները
3. Polymorphism-ը նպաստում է ծրագրի ճկունության և ընդարձակելիության բարձրացմանը
4. Polymorphism-ը գործում է միայն ժառանգված կլասների միջև
5. Python-ում polymorphism-ը կարելի է իրականացնել միայն @staticmethod-ներով
6. Մինչև նույն մեթոդը չի կարող ունենալ տարբեր իրացումներ տարբեր կլասներում
7. Polymorphism-ը աշխատում է միայն թվային տվյալների տիպի համար
8. Եթե երկու կլաս ունեն նույն մեթոդի անունը, Python-ը սխալ է ցույց տալիս
9. Polymorphism-ը թույլ է տալիս մեթոդների տարբեր անվանումներ օգտագործել նույն նպատակով